



Empowered lives.
Resilient nations.

ՁԵՌՆԱՐԿ

«Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով»

Գետային էկոհամակարգերի պահպանման համար հասունացել է ՓՀԷԿ-երի սեկտորում բարեփոխումների անհրաժեշտությունը: 2014-2016թթ. «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ իրականացրեց «Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» ծրագիրը: Ծրագրի նպատակն է ՓՀԷԿ-երի սեկտորում իրականացնել բարեփոխումներ՝ անցկացնելով գետային էկոհամակարգերի վրա կառուցված փոքր ՀԷԿ-երի էկոանձնագրավորում և ստեղծելով տեղեկատվական բազա, թափանցիկ դարձնել ՓՀԷԿ սեկտորի գործունեությունը, կառուցողական հիմք ստեղծել ՓՀԷԿ սեկտորում խնդիրների լուծման համար: Տվյալ ձեռնարկում ներկայացվում են 87 ՓՀԷԿ-երի մոնիտորինգի արդյունքների վերլուծությունը, ՓՀԷԿ սեկտորի բարեփոխումների վերաբերյալ առաջարկությունները՝ ուղղված ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ կառավարությանը, զարգացման միջազգային բանկերին և ՓՀԷԿ-երի սեփականատերերին:

Սույն ձեռնարկը պատրաստվել է «Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» ծրագրի շրջանակներում ՄԱԶԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի աջակցությամբ

Երևան, 2016թ.

**«Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային
էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ
բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով»**

Ծրագրի տեղեկատվական խումբ՝ Ինգա Ջարաֆյան՝ ծրագրի համակարգող, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ, **Վիկտորյա Բուռնազյան՝** ծրագրի տեղեկատվության պատասխանատու, www.ecolur.org կայքի գլխավոր խմբագիր, **Մոնիկա Երիցյան՝** «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի լրագրող, **Արուսյակ Հարությունյան՝** «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի թարգմանիչ:

Փորձագիտական խումբ՝ Աշոտ Ավալյան՝ ծրագրի համակարգող, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ, **Ռոզա Ջուլիակյան՝** քիմիական գիտությունների թեկնածու, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության հաշվառման և վերլուծության բաժնի պետ, **Պետրոս Շահնազարյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների գործակալության Արարատյան ջրավազանային տարածքային կառավարման բաժնի պետ, **Հերիքնազ Մկրտչյան՝** ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ, **Հովհաննես Ուրֆայան՝** ՀՀ բնապահպանության նախարարության «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն, **Սամվել Պիպոյան՝** ձկնաբան, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի Կենսաբանության և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, կենսաբանական գիտությունների դոկտոր, **Լևոն Գալստյան՝** աշխարհագրագետ, «Համահայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնության համակարգող, **Գրիգոր Գաբայան՝** տեխնիկական գիտությունների թեկնածու, ՀՏԿ անվտանգության տեխնիկական հանձնաժողովի անդամ, «Հիդրոէներգետիկա» ՍՊԸ-ի հիմնադիր, **Ինեսսա Գաբայան՝** տեխնիկական գիտությունների թեկնածու, «Հիդրոէներգետիկա» ՍՊԸ-ի տնօրեն, **Արամ Գաբրիելյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի ազգային համակարգող, **Նազելի Վարդանյան՝** իրավաբան, «Հայաստանի անտառներ» ՀԿ-ի տնօրեն

Լուսանկարները՝ Մոնիկա Երիցյանի, Լևոն Գալստյանի

Գետային էկոհամակարգերի պահպանման համար հասունացել է փոքր հիդրոէներգետիկայի սեկտորում բարեփոխումների անհրաժեշտությունը: 2014-2016թթ. «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ իրականացրեց «Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» ծրագիրը: Ծրագրի նպատակն է փոքր հիդրոէներգետիկայի սեկտորում մշակել և ներկայացնել ՓՀԷԿ-երի բարեփոխումների առաջարկություններ՝ միտված գետային էկոհամակարգերի վրա կառուցված փոքր ՀԷԿ-երի էկոանձնագրավորմանը, ստեղծելու դրանց վերաբերյալ տեղեկատվական բազա, ստեղծելու ՓՀԷԿ սեկտորի գործունեության թափանցիկության հենք, փոքր հիդրոէներգետիկայի սեկտորում խնդիրների լուծման համար կառուցողական հիմք:

Ծրագրի ընթացքում ստեղծվել է տեղեկատվական բազա, որը ներառում է 87 ՓՀԷԿ-ի տվյալներ: Տվյալների բազայի ստեղծման համար մշակվել է ՓՀԷԿ-երում ստուգումների անցկացման տիպային պլան, որը կարող է հիմք հանդիսանալ փոքր ՀԷԿ-երի մոնիտորինգի մեթոդաբանության մշակման և հաստատման համար:

ՓՀԷԿ-երի ստուգման տիպային պլանը ներառում է 8 կատեգորիա՝ Ընդհանուր տվյալներ, Հիդրոլոգիական տվյալներ, Դերիվացիա, Ջրառ, Սարքավորումներ, Արտադրություն, Շրջակա միջավայր, Սոցիալական, որոնք պարունակում են 75 չափորոշիչ: ՓՀԷԿ-երի ստուգման տիպային պլանը կազմվել է հետևալ փաստաթղթերի տվյալներով՝ ՀՀ բնապահպանության նախարարության (ԲՆ) «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի բնապահպանական եզրակացություն և նախագիծ, ԲՆ Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվություն (ՋԹ), ԲՆ բնապահպանական պետական տեսչության կողմից տրամադրված ստուգումների մասին և կոնտակտային տվյալներ, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրամադրված լիցենզիոն տվյալներ, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրամադրված ՓՀԷԿ-երի էլեկտրաէներգիայի արտադրության վերաբերյալ տվյալներ: Ստուգման տիպային պլանը համալրվել է ՓՀԷԿ-երի ուսումնասիրման արդյունքներով՝ ջրառ հանգույցում բնապահպանական թողքի ապահովման պայմաններ, պատվարի և ձկնանցարանի նկարագրություն, ձկնանցարանի և ձկնապաշտպան ցանցի ֆունկցիոնալ համապատասխանություն, գետի էկոլոգիական և սանիտարական վիճակը, լանդշաֆտի խախտման դեպքեր, հեռավորությունը բնության հատուկ պահպանվող տարածքներից, գետի ձկնաշխարհի վրա ՓՀԷԿ-երի ազդեցությունը, կայանի սարքավորումների արդյունավետությունը, ՓՀԷԿ-երի կառուցումից հետո նախատեսված բարեկարգման և կանաչապատման աշխատանքների կատարողականը, մոնիտորինգին նախորդած տարվա արտադրած էլեկտրաէներգիայի չափը, ՓՀԷԿ-երի սոցիալական ազդեցությունն ազդակիր համայնքներում դիտարկման ընթացքում ստացված տվյալներով, փորձագիտական խմբի վերլուծությամբ, եզրակացություններով և առաջարկություններով:

87 ՓՀԷԿ-երի մոնիտորինգի արդյունքները տեղադրված են www.ecolur.org կայքում՝ Փոքր ՀԷԿ-եր, վերականգնվող էներգետիկա բաժնում հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓՀԷԿ-ԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Տավուշի մարզ

Նորգեղիկ գեղ՝ «Գոշ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԳՈՇՀԷԿ» ՍՊԸ

Պաղջուր գեղ՝ «Խաչաղբյուր ՀԷԿ-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՔԱՐԵՎԱՐԴ» ՍՊԸ, «Խաչաղբյուր» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԷՆԵՐՋԻ ԿՈԿ» ՍՊԸ, «ԽԱՉԱԴԲՅՈՒՐ-2» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՄԵԳԱԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

Խաչարձան գեղ՝ «Խաչարձան» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԳՈՇՀԷԿ» ՍՊԸ

Աղստև գեղ՝ «Աղստև-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԷԼԷՆԷՔԱ» ՍՊԸ

Հախում գեղ՝ «ՍԻՐԱՐՓԻ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՍԻՐԱՐՓԻ ԱՀ» ՍՊԸ

Աղստև գեղի Գեղիկ վրակ՝ «Գեղիկ ՓՀԷԿ-4» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԷՅԷՆԴԻՋԻ ՍԹԱՅԼ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ

Աղստև գեղի Գեղիկ վրակ՝ «Էրիկ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԷՐԻԿ» ՓՀԷԿ» ՍՊԸ, «Գեղիկ-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԱՐԻՅՈՒ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

Գեղիկ գեղի Կարապոպրակ վրակ՝ «ՎԱՀԱՆ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԷՐԻԿ» ՓՀԷԿ» ՍՊԸ

Մարտունի գեղ՝ «Մարտունի» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՄԿՇԳ ԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ

Վարդենիս գեղ՝ «Վարդենիկ» ՓՀԷԿ, շահագործող՝ «Ջրասահք» ՍՊԸ

Արգիշի գեղ՝ «Արգիշի» ՓՀԷԿ, շահագործող՝ «Հիդրո կորպորացիա» ՓԲԸ

Արագածոտնի մարզ

Գեղարոյ գեղ՝ «Արագած-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՎԱԿՈՒՖԼՕ» ՍՊԸ, «Գեղարոյ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԷԼ-Կաս» ՍՊԸ

Ամբերդ գեղի Ամպուր վրակ՝ «Ամբերդ ՓՀԷԿ-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «Ամբերդ ՀԷԿ» ՍՊԸ, «Ամբերդ ՓՀԷԿ-2» ՓՀԷԿ, շահագործող՝ «Ամբերդ ՀԷԿ» ՍՊԸ

Կոտայքի մարզ

Թեժ գեղ՝ «Թեժ» ՓՀԷԿ, շահագործող՝ «Թեժ վաթերֆոլ» ՍՊԸ

Թեժ գեղի Արջածոր վրակ՝ «Արջածոր» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԱՐՋԱՁՈՐ ՀԷԿ» ՍՊԸ

Ազար գետի Գողթ վրակ¹ «Գողթ-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԶԱՂԱՅԻ ԶՈՐ» ՓԲԸ, «Գողթ-2» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԶԱՂԱՅԻ ԶՈՐ» ՓԲԸ

Հրազդան գետի Ակունք վրակ¹ «Գնդասար» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԳՆԴԱՍԱՐ ՓՀԷԿ» ՍՊԸ

Լոռու մարզ

Մարց գետ¹ «Մարցիգետ ՓՀԷԿ-2», շահագործող՝ «ԱՐԳԻՇՏԻ-1» ՍՊԸ, «ՄԱՐՑԻԳԵՏ-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՄԱՐՑ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

Մարց գետի Սարաջուր վրակ¹ « ՊՈՋԻՏՐՈՆ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԱՅՈՒԴԱ-ԼՈՍ» ՍՊԸ

Փամբակ գետ¹ «Արջուտ-2» ՓՀԷԿ, շահագործող՝ «Լեռ և ջուր» ՍՊԸ, «Սպիտակ ՀԷԿ-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «Էլիզա ֆարմ» ՍՊԸ

Տանձուր գետ¹ «Վահագնի» ՓՀԷԿ, շահագործող՝ «Ապահով տանիք» ՍՊԸ

Գարգառ գետ¹ «Կուրթան» ՓՀԷԿ, շահագործող՝ «Տիրակալ» ՍՊԸ

Չանախչի գետ¹ «Չանախչի ՀԷԿ-2» ՓՀԷԿ, շահագործող «Մավր» ՍՊԸ

Ձորագետ գետ¹ «Կաթնառատ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՎԱՆՇԱՅՆ» ՍՊԸ, «Ձորագետ-5» ՓՀԷԿ, շահագործող՝ «Հազար ու մեկ» ՍՊԸ, «Ձորագետ-6» ՓՀԷԿ՝ շահագործող՝ «Վի-Ար-Բի Կոնցեռն» ՍՊԸ, «ՁորահԷԿ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՁՈՐԱԳԵՏ ՀԻԴՐՈ» ՍՊԸ

Շիրակի մարզ

Հեղնաջուր գետ¹ «Հեղնաջուր» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԱՐՆԱՎԱՐ» ՍՊԸ

Ախուրյան գետ¹ «Մարմաշեն» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԷԼԲԻՍ» ՍՊԸ, «Փարոս» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԼԱՅԹԷԿՈ» ՍՊԸ, «Ամասիա» ՓՀԷԿ՝ շահագործող՝ «ԷՐՍԵԴ» ՍՊԸ

Սյունիքի մարզ

Որոտան գետի Շաքի վրակ¹ «Շաքի» ՓՀԷԿ, շահագործող՝ «Հակոբջանյանի և Գալստյանի ՀԷԿ» ՍՊԸ

Մեղրի գետ¹ «Մեղրի» ՓՀԷԿ, շահագործող՝ «Բյու-Հա2» ՍՊԸ, «ՆԺԴԵՀ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՍԱՐ-ՌՈՒԲ» ՍՊԸ,

Մեղրի գետի Լիճք և Արևիկ վրակներ¹ «Կանթեղ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԳԵԼԻԵԳՈՒԶԱՆ» ՍՊԸ

Որոտան գետ¹ «Որոտնա ՀԷԿ» ՓՀԷԿ, շահագործող՝ «Հակոբջանյանի և Գալստյանի ՀԷԿ» ՍՊԸ, «Ապրես» ՓՀԷԿ, շահագործող՝ «Սյունիք» ՍՊԸ, «Որոտան-7» ՓՀԷԿ,

շահագործող՝ «ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «Իշխանասար» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՄԻԵՋԵՐՔ» ՍՊԸ

Սանդաղբյուր գետը՝ «Սանդաղբյուր» ՓՀԷԿ, շահագործող՝ «Սինգլ Գոո» ՍՊԸ

Սմբուկի ջուր աղբյուր՝ «Սմբուկ» ՓՀԷԿ, շահագործող՝ «Սմբուկ» ՍՊԸ

Վարդան Ջորավար աղբյուրներ՝ «Մանուկ» ՓՀԷԿ, շահագործող՝ «Սմբուկ» ՍՊԸ

Ջաղացի աղբյուր՝ «Անգեղակործ» ՓՀԷԿ, շահագործող՝ «Ժ ԵՎ Կ ՀԷԿ» ՍՊԸ

Արագիլիջուր (Արագիլգետ) գետը՝ «Գետափ» ՓՀԷԿ, շահագործող՝ «Ֆիրմա Գ.Ա.Խ» ՍՊԸ, «Շաղատ» ՓՀԷԿ, շահագործող՝ «Շաղատ» ՍՊԸ

Այրի գետը՝ «Այրի» ՓՀԷԿ, շահագործող՝ «Ջորաքար» ՓԲԸ, «Դաստակերտ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԲԱՍԱ ՇԻՆ» ՍՊԸ

Ծավ գետը՝ «Ծավ» ՓՀԷԿ, շահագործող՝ ԼԵՍՈՄԱ» ԲԲԸ

Ողջի գետի Գեղի վրակ՝ « Գեղի-2» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԷՐԵՄԻՐԷՆԵՐԺԻ» ՍՊԸ

Ողջի գետը՝ «Ողջի-1», «Ողջի2», «Ողջի 3» ՓՀԷԿ-եր շահագործող՝ «ԿԱՊԱՆ-ԷՆԵՂԺԻ» ՓԲԸ

Ողջի գետի Բաղացջուր վրակ՝ «Ձագեծոր ՓՀԷԿ-2» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՔԱՋԱՐԱՆ ՄՈՆՏԱԺ» ՍՊԸ

Վայոց ձորի մարզ

Արփա գետը՝ «ԱՐԵՆԻ ՀԷԿ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԱՐԵՆԻ ՀԷԿ, «Ջերմուկ ՀԷԿ-2» ՓՀԷԿ, շահագործող՝ «Ջերմուկի հիդրոտեխ» ՍՊԸ, «Արփա» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ

Արփա գետի Հեր-Հեր վրակ՝ «Հեր-Հեր-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՖԻՐՄԱ Գ.Ա.Խ.» ՍՊԸ, «Հեր-Հեր-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՎԳ և որդիներ» ՍՊԸ

Սառնաղբյուր բնական աղբյուրներ և Արփա գետի անանուն վրակներ՝ «Ջերմուկ» ՓՀԷԿ, շահագործող՝ «Մուշեղ ՀԷԿ» ՍՊԸ

Եղեգիս գետը՝ «Եղեգիս-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «Բազենք» ՓԲԸ, «Եղեգնաձոր» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՄԻՆԱ-ՄԱՅԱ» ՍՊԸ, «Եղեգնաձոր ՓՀԷԿ-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՄԻՆԱ-ՄԱՅԱ» ՍՊԸ, «Գողթանիկ» ՓՀԷԿ, շահագործող՝ «Հ.Հ.Ն.Մ.Ս.» ՍՊԸ, «ԵՂԵԳԻՍ-3» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ՎՈԹԸ» ՍՊԸ, «Եղեգիս-2» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՌԱԵԼ ԳԷՍ» ՍՊԸ, «Եղեգիս» ՓՀԷԿ՝ շահագործող՝ «Էլեգիս ՀԷԿ» ՍՊԸ, «Եղեգ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԵՂԵԳՀԷԿ» ՍՊԸ, «Խաչի քար» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԲԻԷՍԲԻ» ՍՊԸ, «Տիգրան Մեծ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» ՍՊԸ

Եղեգիս գետի Արտաբույնք վրակ՝ «ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» ՍՊԸ, «Վայոց» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» ՍՊԸ

Եղեգիսի գեղի Կարակայա վրակ՝ «ՍԱՆՌԱՅԶ» ՓՀԷԿ, շահագործող «ՍԱՆՌԱՅԶ ԷԼԵԿՏՐԻԿ» ՓԲԸ, «Վարդահովիտ» ՓՀԷԿ, շահագործող «ՎԱՐԴԱՀՈՎԻՏ» ՍՊԸ

Կարակայա գեղի և նրա աջակողմյա վրակ՝ «Կարակայա» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՀԱԿ ՀԷԿ» ՍՊԸ

Կարակայայի գեղի Այսաս վրակ՝ «Հերմոն» ՓՀԷԿ, շահագործող՝ «Էլեգիս ՀԷԿ» ՍՊԸ, «Նանե» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԱՐԱՏԵՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

Քարագլուխ գեղ՝ «Քարագլուխ» ՓՀԷԿ, շահագործող «Հերմոն ՄԱԴ» ՍՊԸ

Արտավան գեղ՝ «Արտավան-1» ՓՀԷԿ, շահագործող «Ջահուկ» ՍՊԸ

Արփա գեղի Անկան վրակ՝ «ԳՆԴԵՎԱՆՔ » ՓՀԷԿ, շահագործող «ԲԻԷՍԲԻ» ՍՊԸ

Ջառիթափ գեղի Մարտիրոս վրակ՝ «Վարանցով» ՓՀԷԿ, շահագործող «ՎԱՐԱՆՑՈՎ ՀԷԿ» ՍՊԸ

ԽՆԴԻՐՆԵՐ

ՓՀԷԿ-երի մոնիտորինգի արդյունքում հայտնաբերված խնդիրներն են. նախագծային սխալ ջրատնտեսական հաշվարկները, և բնապահպանական թողքի չափահավելը, ձկնանցարանների և ձկնապաշտպան ցանցերի ֆունկցիոնալ անհամապատասխանությունը և ձկնաշխարհի կենսաբազմազանության և տեղաբնակ ձկնատեսակների վտանգների քանակական ցուցանիշների բացասական փոփոխությունները, ՓՀԷԿ-երի արտադրողականության անբավարար մակարդակը, ՓՀԷԿ-երի կասկառների ձևավորում՝ առանց կոմուխատիվ ազդեցության գնահատման:

Բնապահպանական թողքի ապահովում և նախագծային սխալ ջրատնտեսական հաշվարկներ

Այցելած բոլոր ՓՀԷԿ-երում բացակայում է բնապահպանական թողքի կառավարման համակարգ, որը թույլ կտար վերահսկել, թե որքանով է տնտեսվարողը կատարում ՋԹ-ով սահմանված բնապահպանական թողքի չափաքանակի պահպանման պահանջը: ՓՀԷԿ-երում բացակայում է բնապահպանական թողքը գրանցող ջրաչափը, որը տեղադրված պետք է լինի բնապահպանական թողքի բացթողման կետում:

ՀՀ կառավարության 30.06.2011թ. 927-Ն որոշմամբ հաստատված բնապահպանական թողքի մեթոդաբանությամբ որպես բնապահպանական թողք ընդունվում է գետի հիդրոլոգիական դիտակետի գետահատվածում դիտարկված բազմամյա տարեկան ձմեռային տասնօրյա նվազագույն ելքերի միջին արժեքը, և որոշվող բնապահպանական թողքի արժեքը բոլոր ամիսների համար նույնն է: Հաշվի չեն առնվում գետերի ուժիմներն ըստ տարվա եղանակների, հիդրոլոգիական, հիդրոմորֆոլոգիական, հիդրոկենսաբանական և հիդրոքիմիական բնութագրիչները: Փոքր ՀԷԿ-երի ՋԹ-ներում սահմանված բնապահպանական թողքի չափաքանակը չի ապահովում գետային էկոհամակարգի հավասարակշռությունը:

Բացակայում են գետերի վերաբերյալ հիդրոլոգիական հավաստի տվյալներ, ինչը հանգեցնում է սխալ ջրատնտեսական հաշվարկների: Հիմնականում հաշվարկներն իրականացվում են ելքերի միջին ամսական շարքերի հիման վրա, այն դեպքում, երբ փոքր ՀԷԿ-երի համար նպատակահարմար է օգտագործել միջին օրական ելքերը:

Հիդրոլոգիական ոչ հավաստի տվյալների վրա կատարված ջրատնտեսական հաշվարկների արդյունքում մի շարք ՓՀԷԿ-եր չեն ապահովում իրենց նախագծային հզորությունները:

Ձկնանցարանների միջոցով բնապահպանական թողք ապահովող մի շարք ՓՀԷԿ-երում արձանագրվել են խախտումներ: Ձկնանցարանների մուտքերը փակվում են տարբեր կոնստրուկցիաներով, որոնք խոչընդոտում են բնապահպանական թողքի անցումը ներքին բիեֆ:

ԶԹ-ի տրամադրման գործընթացում պատշաճ չափով չի պահպանվել ՀՀ ջրային օրենսգրքով ամրագրված ջրի բաշխման գերակայությունների գնահատման պահանջը. հաշվի չեն առնվում բոլոր ջրօգտագործողների պահանջները և նրանց փոխկապակցվածությունը: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սակագնի սահմանման ժամանակ հաշվի է առնում, թե ինչ նպատակով և որ համակարգի կողմից է օգտագործվում ջուրը: Զրօգտագործողների ցանկում էներգետիկ նպատակով ջուրը վերցվում է վերջում՝ առաջնահերթություն տալով տնտեսական, ոռոգման և խմելու նպատակներով ջրօգտագործողներին: Իրականում կան ՓՀԷԿ-եր, որոնք գետից վերցված ջուրն ուղղում են ՓՀԷԿ, այնուհետև ուղղում ոչ թե գետ, այլ՝ ոռոգման համակարգեր:

Կան դեպքեր, երբ ՓՀԷԿ-ը միաժամանակ ջուրը վերցնում է երկու տարբեր ջրհոսքերից՝ գետից և խմելու կամ ոռոգման ջրի համակարգից: Կան դեպքեր, երբ ՓՀԷԿ-ը նախագծով պետք է կառուցված լինի գետի վրա, սակայն կառուցված է ոռոգման համակարգի վրա:

Կումուլիատիվ ազդեցության գնահատում

ՓՀԷԿ-երի ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ գետերի վրա առկա են ՓՀԷԿ-երի կասկաղներ: Գնահատված չէ այս կումուլիատիվ ազդեցությունը գետային էկոհամակարգի վրա:

Ծրագրի շրջանակներում հաշվարկվել է նաև գետերի ծանրաբեռնվածությունը ՓՀԷԿ-երով՝ հաշվարկելով ՓՀԷԿ-երի դերիվացիայի գումարային երկարության տոկոսային հարաբերությունը գետի երկարության նկատմամբ:

Ներկայացված են ՓՀԷԿ-երով ծանրաբեռնված այն գետերը, որոնց երկարության 30 տոկոսից ավելին խողովակի մեջ է կամ կարող է հայտնվել նոր կառուցվող ՓՀԷԿ-երի պատճառով:

Եղեգիս գետի ծանրաբեռնվածությունը ՓՀԷԿ-երով՝ 47կմ/ 51.46%

Կառուցված են՝

1. «Եղեգիս-1» (ըստ ՀԾԿՀ-ի տեղեկանքի՝ դերիվացիայի եկարությունը՝ 4000մ)

2. «Եղեգնաձոր» (ըստ նախագծի՝ 3250մ, 54մ)
3. «Եղեգնաձոր ՓՀԷԿ-1» (ըստ նախագծի՝ 2650մ)
4. «ԵՂԵԳԻՍ-3» (ըստ նախագծի՝ դերիվացիայի երկարությունը՝ 1391մ)
5. «Եղեգիս-2» (ըստ նախագծի՝ դերիվացիայի երկարությունը՝ 2138մ)
6. «Եղեգ» ՓՀԷԿ (ըստ նախագծի՝ դերիվացիայի երկարությունը՝ 1924մ)
7. «Գողթանիկ» (ըստ նախագծի՝ դերիվացիայի երկարությունը՝ 1400մ)
8. «Եղեգիս» (դերիվացիայի երկարությունը՝ 2450մ)
9. «Տիգրան Մեծ» (ըստ նախագծի՝ դերիվացիայի երկարությունը՝ 2691մ),
10. «ԽԱԶԻ ՔԱՐ» (ըստ նախագծի՝ դերիվացիայի երկարությունը՝ 2240մ):

Եղեգիս գետի վրա նախատեսվում է հետևյալ ՓՀԷԿ-երի կառուցումը՝

1. «Ալնարս» ՓՀԷԿ՝ շահագործող՝ «ԱԼՆԱՐՍ» ՍՊԸ (Ըստ ՀԾԿՀ-ի տեղեկանքի՝ խողովակաշարի երկարությունը՝ 2300մ)
2. «Եղեգնուտ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ (Ըստ ՀԾԿՀ-ի տեղեկանքի՝ խողովակաշարի երկարությունը՝ 2665մ)
3. «ԷԼԻՍ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԷԼԻՍ ՀԷԿ» ՍՊԸ (Ըստ ՀԾԿՀ-ի տեղեկանքի՝ ՓՀԷԿ-ը կառուցվելու է Եղեգիս և Սողանլու գետերի վրա, խողովակաշարերի երկարությունը՝

2360,0մ	և	2288,0մ):
---------	---	-----------

Եղեգիսի գետի Կարակայա վտակի ծանրաբեռնվածությունը ՓՀԷԿ-երով՝ 15կմ/67.76%

1. «ՍԱՆՌԱՅՁ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՍԱՆՌԱՅՁ ԷԼԵԿՏՐԻԿ» ՓԲԸ» (Ըստ նախագծի՝ խողովակաշարի երկարությունը՝ 2268մ)
2. «Վարդահովիտ³» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՎԱՐԴԱՀՈՎԻՏ» ՍՊԸ» (Ըստ նախագծի՝ խողովակաշարի երկարությունը՝ 3570 մ)
3. «Կարակայա» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՀԱԿ ՀԷԿ» ՍՊԸ (Ըստ նախագծի՝ խողովակաշարի երկարությունը՝ Կարակայա գետ՝3127մ, 1200 մ , աջակողմյա վտակ՝ 1200մ)

Կարակայայի Այսաս վտակի ծանրաբեռնվածությունը ՓՀԷԿ-երով՝ 12կմ/49.96%

1. «Հերմոն» ՓՀԷԿ, շահագործող՝ «Էլեգիս ՀԷԿ» ՍՊԸ» (Ըստ նախագծի՝ խողովակաշարի երկարությունը՝ 3270մ)
2. «Նանե» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԱՐԱՏԵՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ (Ըստ նախագծի՝ խողովակաշարի երկարությունը՝

2726մ)

Արտավան գետի ծանրաբեռնվածությունը ՓՀԷԿ-երով՝ 19կմ/20.11%

1. «Արտավան-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «Ջահուկ» ՍՊԸ (Ըստ նախագծի՝ 3821.5մ)

Արտավան գետի վրա նախատեսվում է կառուցել՝

2. «Արտավան» ՓՀԷԿ-1, շահագործող՝ «Արտավան ՀԷԿ» ՍՊԸ (ճնշումային խողովակաշարի երկարությունը ըստ ՀԾԿՀ-ի 2015թ-ի հոկտեմբերի 1-ի տեղեկանքի՝ 945մ)

3. «Արտավան» ՓՀԷԿ-2, շահագործող՝ «Արտավան ՀԷԿ» ՍՊԸ (ճնշումային խողովակաշարի երկարությունը ըստ ՀԾԿՀ-ի 2015թ-ի հոկտեմբերի 1-ի տեղեկանքի՝ 1585մ):

Այս ՓՀԷԿ-րի կառուցման դեպքում խողովակների մեջ կվերցվի Արտավան գետի 33.42%-ը:

Ջառիթափ գետի Մարտիրոս վրակի վրա ծանրաբեռնվածություն ՓՀԷԿ-երով 12կմ/33.47%

1. «Վարանցով» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՎԱՐԱՆՑՈՎ ՀԷԿ» ՍՊԸ, ՍՊԸ (ճնշումային խողովակաշարի երկարությունը, ըստ նախագծի, 4017մ):

Գեղարոտ գետի վրա ծանրաբեռնվածությունը ՓՀԷԿ-երով՝ 25կմ/28.83%

1. «Գեղարոտ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԷԼ-Կաս» ՍՊԸ (ճնշումային խողովակաշարի երկարությունը, ըստ նախագծի, 4640մ):
2. «Արագած-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՎԱԿՈՒՖԼՕ» ՍՊԸ (Ըստ նախագծի՝ ճնշումային խողովակաշարի երկարությունը՝ 2350 մ, դոտացիոն խողովակաշարի երկարությունը՝ 219մ)

Գեղարոտ գետի վրա նախատեսվում է կառուցել՝

1. «Ալպիական» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԻՓՐԱ» ՍՊԸ (Ըստ ՀԾԿՀ-ի 2015թ-ի հոկտեմբերի 1-ի տեղեկանքի՝ խողովակաշարի երկարությունը՝ 2800մ)
2. «Լուսարփի» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԼՈՒՍԱՐՓԻ» ՍՊԸ (Ըստ ՀԾԿՀ-ի 2015թ-ի հոկտեմբերի 1-ի տեղեկանքի՝ խողովակաշարի երկարությունը՝ 1120մ):

Այս ՓՀԷԿ-երի կառուցման դեպքում խողովակի մեջ կվերցվի Գեղարոտ գետի 44.51%-ը:

Ազար գետի Գողթ վրակի ծանրաբեռնվածությունը ՓՀԷԿ-երով՝ 16կմ/36.87%

1. «Գողթ-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԶԱՂԱՑԻ ՁՈՐ» ՓԲԸ (ճնշումային խողովակաշարի երկարությունը, ըստ նախագծի, 3850մ):
2. «Գողթ-2» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԶԱՂԱՑԻ ՁՈՐ» ՓԲԸ (ճնշումային խողովակաշարի երկարությունը, ըստ նախագծի, 2050մ):

Մարց գետի ծանրաբեռնվածությունը ՓՀԷԿ-երով՝ 29կմ/36.65%

1. «Մարցիգետ ՓՀԷԿ-2», շահագործող՝ «ԱՐԳԻՇՏԻ-1» ՍՊԸ (ճնշումային խողովակաշարի երկարությունը, ըստ նախագծի, 2818 մ և 2962մ)
2. «ՄԱՐՑԻԳԵՏ-1» ՓՀԷԿ, շահագործող՝ «ՄԱՐՑ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ (ճնշումային խողովակաշարի երկարությունը, ըստ նախագծի, 4850 մ)

Մարց գետի Սարաջուր վրակի վրա ծանրաբեռնվածությունը ՓՀԷԿ-երով՝ 11կմ/36.36%

1. «ՊՈՁԻՏՐՈՆ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԱՅՈՒԴԱ-ԼՈՍ» ՍՊԸ (ճնշումային խողովակաշարի երկարությունը, ըստ նախագծի, 750մ, 750 մ, 2500 մ)

Արագիլիջուր (Արագլիգետ) գետի վրա ծանրաբեռնվածությունը՝ 16կմ/36.44%

1. «Գետափ» ՓՀԷԿ, շահագործող՝ «Ֆիրմա Գ.Ա.Խ» ՍՊԸ (Ըստ նախագծի՝ ճնշումային խողովակաշարի երկարությունը 4568մ)
2. «Շաղատ» ՓՀԷԿ, շահագործող՝ «Շաղատ» ՍՊԸ (Ըստ նախագծի՝ ճնշումային խողովակաշարի երկարությունը՝ 1263մ)

Գոշ գետի վրա ծանրաբեռնվածությունը ՓՀԷԿ-երով՝ 8կմ/37.37%

1. «Գոշ» ՓՀԷԿ, շահագործող՝ «ԳՈՇՀԷԿ» ՍՊԸ (ըստ նախագծի՝ ճնշումային խողովակաշարի երկարությունը 2990 մ)

Ձկնանցարանների և ձկնապաշտպան ցանցերի ֆունկցիոնալ անհամապատասխանություն, ձկնաշխարհի կենսաբազմազանության և տեղաբնակ ձկնատեսակների վտանգների քանակական ցուցանիշների բացասական փոփոխություններ

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել է ՓՀԷԿ-երի ազդեցությունը գետային ձկնաշխարհի վրա:

Աղստև գետի Գետիկ վտակում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, Սևանի կողակը *Capoeta sevangi* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, ծիածանախայտը *Parasalmo mykiss*:

Գետիկ գետի Նորգետիկ վտակում կարող է հանդիպել միայն կարմրախայտը *Salmo trutta fario*:

Գետիկ գետի Կարատոպրակ վտակում կարող է բնակվել միայն կարմրախայտը *Salmo trutta fario*:

Պաղջուր գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, կողակը *Capoeta capoeta*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*: Հնարավոր է՝ այստեղ բարձրանա նաև արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի լերկաձուկը *Oxynoemacheilus brandtii*, Կուրի սպիտակաձուկը *Alburnus filippii*: Ձկնային տնտեսություններից Պաղջուր գետում կարող է հայտնվել նաև ծիածանախայտը *Parasalmo mykiss*:

Խաչարձան գետում կարող են հանդիպել՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, Կուրի բեղուն *Barbus cyri*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*:

Աղստև գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Սևանի կողակը *Capoeta sevangi* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), Կուրի լերկաձուկը *Oxynoemacheilus brandtii*, Կուրի սպիտակաձուկը *Alburnus filippii*, կովկասյան թեփուղը *Squalius orientalis*, արծաթափայլ կարասը *Carassius gibelio*, ամուրյան նրբաձկնիկը *Pseudorasbora parva*, ծիածանախայտը *Parasalmo mykiss*:

Հախում գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, Կուրի բեղուն *Barbus cyri*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, կողակը *Capoeta sevangi*

(գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), արծաթափայլ կարասը *Carassius gibelio*:

Մարտունի գետում կարող են հանդիպել՝ գեղարքունին *Salmo ischchan gegarkuni* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), կարմրախայտը *Salmo trutta fario*: Հնարավոր է՝ այստեղ բարձրանա նաև Սևանի կողակը *Capoeta sevangi* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում) և Սևանի բեղաձուկը (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում):

Վարդենիս գետում կարող են հանդիպել՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, Սևանի կողակը *Capoeta sevangi* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), գեղարքունին *Salmo ischchan gegarkuni* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում): Հնարավոր է՝ այստեղ բարձրանա նաև Սևանի բեղաձուկը *Barbus goetschaicus* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում): Բացառված չէ նաև ծիածանախայտի *Parasalmo mykiss* առկայությունը, որին աճեցնում են այս գետի հարևանությամբ գտնվող լճակներում:

Արգիշի գետում կարող են հանդիպել՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, Սևանի բեղաձուկը *Barbus goetschaicus* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), Սևանի կողակը *Capoeta sevangi* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), գեղարքունին *Salmo ischchan gegarkuni* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում):

Հնարավոր է՝ այստեղ բարձրանա նաև արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, որը վերջին տարիներին է հայտնվել Սևանի ավազանում և մեր կողմից նկատվեց ՓՀԷԿ-ի հարակից տարածքում: ՓՀԷԿ-ի աշխատակիցները զբաղվում են ձկների բաց թողնման աշխատանքներով: Ըստ նրանց՝ պարբերաբար ձկներ են բաց թողնվում ՓՀԷԿ-ի գլխամասի ջրամբար: Հնարավոր է՝ այդ ձկների մեջ լինի նաև ծիածանախայտը *Parasalmo mykiss*: Ներկայիս իրավիճակը պարզելու համար անհրաժեշտ է համապատասխան ձկնաբանական լրացուցիչ ուսումնասիրությունների իրականացում:

Գեղարոտ գետում, ըստ բնակիչների և ՓՀԷԿ-ի աշխատակիցների, ձկներ չեն հանդիպում, չնայած որ գետի ջրաբանական տիպը համապատասխանում է կարմրախայտի *Salmo trutta fario* կենսաբանական պահանջներին:

Այլ խնդիր է գետի ջրաքիմիական կազմը, որը կարող է նպաստավոր չլինել ձկների կենսագործունեության համար և լրացուցիչ ուսումնասիրությունների կարիք ունի:

Ամբերդ գետի Ամպուր վտակում հանդիպում է կարմրախայտը *Salmo trutta fario*: Հնարավոր է նաև Կուրի բեղլուի *Barbus cyri* և արևելյան տառեխիկի *Alburnoides eichwaldii* առկայությունը:

Գողթ գետի ջրաբանական տիպը համապատասխանում է կարմրախայտի *Salmo trutta fario* կենսաբանական պահանջներին:

Գետի հունի պարբերաբար չորացումը չի կարող նպաստել կարմրախայտի

գոյությունը տվյալ գետակում պահպանելու կամ վերականգնելու համար:

Հրազդան գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, Սևանի կողակը *Capoeta sevangi* (գրանցված է ՀՀ կենդանիների կարմիր գրքում), Կուրի բեղաձուկը *Oxynoemacheilus brandtii*, արծաթափայլ կարասը *Carassius gibelio*, ամուրյան նրբաձկնիկը *Pseudorasbora parva*, ծիածանախայտը *Parasalmo mykiss*, որոնք կարող են ներթափանցել նաև Հրազդանի մեջ թափվող վտակների, մասնավորապես **Ակունք գետի** մեջ:

Դեբեդ գետի ավազանին պատկանող ջրակալներում հանդիպում են կարմրախայտը *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, Սևանի կողակը *Capoeta sevangi*, Կուրի կողակը *Capoeta capoeta capoeta*, Կուրի սպիտակաձուկը *Alburnus filippii*, մուրձին *Luciobarbus mursa*, քաղթակը *Gobio* sp., Կուրի լերկաձուկը *Oxynoemacheilus brandtii*, արծաթաձկնիկը *Leucaspius delineatus*, բրամը *Abramis brama*, արծաթափայլ կարասը *Carassius gibelio*, նաև տարբեր ձկնային տնտեսություններից հաճախ այստեղ ներթափանցող ծիածանախայտը *Parasalmo mykiss*, երբեմն՝ կարպը *Cyprinus carpio*: Վերոգրյալ ձկնատեսակներից շատերը հանդիպում են Ձորագետի ու Փամբակի միախառնման տեղում և Ձորագետի հունով բարձրանում են դեպի հոսանքն ի վեր:

Ձորագետի վրա կառուցված հիդրոէներգետիկ և հիդրոտեխնիկական կառույցները խոչընդոտում են ձկների միգրացիային: Արդյունքում Դեբեդում բնակվող ձկնատեսակները, որոնց մեծ մասին բնորոշ են սեզոնային միգրացիաները հատկապես բազմացման շրջանում, հնարավորություն չունեն բարձրանալ Ձորագետի հոսանքն ի վեր՝ այստեղ բնակվելու և բազմանալու համար:

Մարց գետում հիմնականում հանդիպում են Կուրի բեղաձուկը *Barbus cyri* և արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*: Մարց գետը հայտնի է եղել կարմրախայտի *Salmo trutta fario* մեծ պաշարներով:

Մարց գետի վրա կառուցված ՓՀԷԿ-երի ձկնանցարանները չեն նպաստում Դեբեդից գետ մտնող ձկների միգրացիաների իրականացմանը. գետի ստորին մասից բարձրացող ձկները անհաղթահարելի արգելքի են հանդիպում, ինչի արդյունքում էականորեն նվազել է գետի ձկնային կենսաբազմազանությունը:

Մարց գետի Սարաջուր վտակում կարող են հանդիպել՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, Կուրի բեղուն *Barbus cyri*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*:

Փամբակ գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, Սևանի կողակը *Capoeta sevangi* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում): Ձկնային

տնտեսություններից հաճախ այստեղ է ներթափանցում ծիածանախայտը *Parasalmo mykiss*:

Տանձուտ գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*: Ձկնային տնտեսություններից այստեղ կարող է ներթափանցել ծիածանախայտը *Parasalmo mykiss*, իսկ մոտակա լճակից՝ արծաթափայլ կարասը *Carassius gibelio*:

Գարգառ գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*:

Գարգառ գետի վրա կառուցված ՓՀԷԿ-ի պատվարի շահագործումից առաջացած լճակի ջրի ջերմաստիճանն էականորեն տարբերվում է գետի հոսող ջրի ջերմաստիճանից, ինչը բարենպաստ պայմաններ չի ստեղծում գետաբնակ ձկների բնականոն կենսագործունեության համար: Լճակը նպաստավոր է արծաթափայլ կարասի *Carassius gibelio* ներթափանցման ու բնակության համար, ինչը ցանկալի երևույթ չէ:

Չանախչի գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, Սևանի կողակը *Capoeta sevangi* /հազվադեպ է հանդիպում, գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում/: Ձկնային տնտեսություններից այստեղ է ներթափանցում ծիածանախայտը *Parasalmo mykiss*:

Հեղնաջուր գետում ձկնատեսակներից հանդիպում է միայն կարմրախայտը *Salmo fario*:

Հեղնաջուր գետի վրա ՓՀԷԿ-ի պատվարի կառուցման հետևանքով ձևավորված է լճականման ջրակալ, որը կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել արծաթափայլ կարասի *Carassius gibelio* այստեղ ներթափանցման և կլիմայավարժման գործում, ինչը ցանկալի երևույթ չէ: Մյուս կողմից լճակում հավաքված ջուրը շատ ավելի է տաքանում ամռան և սառչում՝ ձմռան ամիսներին, ինչը նույնպես խաթարում է կարմրախայտի, որպես գետային կենսաձև վարող տեսակի, բնականոն միգրացիաները և կենսակերպը:

Ախուրյան գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario* (պատահական է հանդիպում), սևահոնը *Acanthalburnus microlepis*, Կուրի կողակը *Capoeta capoeta capoeta*, Սևանի կողակը *Capoeta sevangi*, Կուրի ենթաբերանը *Chondrostoma cyri*, կովկասյան թեփուղը *Squalius orientalis*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, անգորական լերկաձուկը *Oxynemacheilus angorae*, Կուրի լերկաձուկը *Oxynemacheilus brandtii*, հաշամը *Aspius aspius* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), Կուրի սպիտակաձուկը *Alburnus filippii*, ծածանը *Cyprinus carpio*, ավազային ցլիկաձուկը *Neogobius fluviatilis*, ոսկեգույն ծականը *Sabanejewia aurata* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), արծաթափայլ կարասը *Carassius gibelio* (կլիմայավարժված է), ամուրյան նրբաձկնիկը *Pseudorasbora parva* (կլիմայավարժված է): Հնարավոր է ձկնային տնտեսություններից ներթափանցեն ծիածանախայտը *Parasalmo mykiss*, սպիտակ

Hypophthalmichthys molitrix և խայտաբղետ *Aristichthys nobilis* հաստաճակատները, սպիտակ ամուրը *Ctenopharyngodon idella*:

Որոտան գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, մուրծին *Luciobarbus mursa*, Սևանի կողակը *Capoeta sevangi* /գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում/, Կուրի սպիտակաձուկը *Alburnus filippii*, կովկասյան թեփուղը *Squalius orientalis*, արծաթափայլ կարասը *Carassius gibelio*: Ձկնային տնտեսություններից այստեղ պարբերաբար հայտնվում է ծիածանախայտը *Parasalmo mykiss*:

Որոտան գետի Շաքի վտակի հիմնական ձկնատեսակը կարմրախայտն *Salmo trutta fario* է: Այս գետում կարող են հանդիպել նաև արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, կողակը *Capoeta sp.*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri* : Վերջին տարիներին այս գետի ափերին գործում են ձկնաբուծարաններ, որտեղից գետ կարող են թափանցել նաև ծիածանախայտը *Parasalmo mykiss*, կարասը *Carassius gibelio*:

Մեղրի գետում կարող են հանդիպել կարմրախայտը *Salmo trutta fario*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, կողակը *Capoeta sp.*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի լերկաձուկը *Oxynemacheilus brandtii*:

Սանդաղբյուր գետում հնարավոր է կարմրախայտի *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկի *Alburnoides eichwaldii*, կողակի *Capoeta capoeta*, Կուրի բեղաձկան *Barbus cyri* առկայությունը: ՓՀԷԿ-ի պատվարից վերև ձևավորված մեծ լիճը հնարավոր է դարձնում նաև արծաթափայլ կարասի *Carassius gibelio* բնակեցումը: Կարող է ներթափանցել նաև ծիածանախայտը *Parasalmo mykiss*:

Շաղատ գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, կողակը *Capoeta sp.*: Հնարավոր է նաև ծիածանախայտի *Parasalmo mykiss* և արծաթափայլ կարասի *Carassius gibelio* ներթափանցումը:

Այրի գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*:

Այրի գետի հունի վրա կառուցված ՓՀԷԿ-ի գլխամասի պատվարից առաջացած լճակը և ձկնուղու գործող տիպը նպաստավոր պայմաններ չեն ստեղծում վերոգրյալ ձկնատեսակների բնականոն կենսագործունեության համար:

Ծավ գետի վերին հոսանքում հանդիպում է կարմրախայտը *Salmo trutta fario*, կողակը *Capoeta capoeta*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի լերկաձուկը *Oxynemacheilus brandtii*, պարբերաբար ներթափանցում է նաև ծիածանախայտը *Parasalmo mykiss*:

Ողջի գետի միջին հոսանքում կարող են հանդիպել կարմրախայտը *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, կողակը *Capoeta sp.*, արծաթափայլ կարասը *Carassius gibelio*: Հնարավոր է՝ այստեղ հանդիպի նաև ծիածանախայտը *Parasalmo mykiss*:

Ողջի գետի Գեղի վտակի ստորին հոսանքում կարող են հանդիպել կարմրախայտը *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, կողակը *Capoeta sp.*: Հնարավոր է՝ այստեղ հանդիպի նաև ծիածանախայտը *Parasalmo mykiss* և արծաթափայլ կարասը *Carassius gibelio*:

Ողջի գետի Բաղաց ջուր վտակի վերին հոսանքում կարող է հանդիպել կարմրախայտը *Salmo trutta fario*: Հնարավոր է՝ այստեղ հանդիպի՝ նաև Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, ծիածանախայտը *Parasalmo mykiss*, որն աճեցվում է ՓՀԷԿ-ի հարևանությամբ գտնվող ավազաններում:

Ողջիի գետավազանում հիդրոտեխնիկական տարբեր կառույցները՝ ՓՀԷԿ-ների պատվարները, ոռոգման համակարգերը, Գեղիի ջրամբարը, ինչպես նաև հանքարդյունաբերության մեջ օգտագործվող գետի ջրերի մեծ քանակությունը և գետերի մեջ պարբերաբար թափվող թափոնային ջրերը գետերում արհեստականորեն առաջացած սակավաջրության հետ մեկտեղ անդառնալի վնաս են հասցնում այդ գետերի ոչ միայն ձկնաշխարհին, այլ դրանց ողջ էկոհամակարգին: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է շուտափույթ իրականացնել ձկնուղիների ու ձկնապաշտպան այլ կառույցների կառուցման, ինչպես նաև թափոնային հոսքաջրերի վերացման, գետերում բնապահպանական թողքի նորովի սահմանման ու բնապահպանական այլ միջոցառումներ:

Արփա գետում հանդիպում են՝ ճանարը *Luciobarbus capito*, մուրծին *Luciobarbus mursa*, ծածանը *Cyprinus carpio*, ամուրյան նրբաձկնիկը *Pseudorasbora parva*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի լերկաձուկը *Oxynoemacheilus brandtii*, արծաթափայլ կարասը *Carassius gibelio*, Կուրի սպիտակաձուկը *Alburnus filippii*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, Սևանի կողակը *Capoeta sevangi* (գրանցված է ՀՀ կենդանիների կարմիր գրքում), Կուրի կողակը *Capoeta capoeta capoeta*, Կուրի ենթաբերանը *Chondrostoma cyri*, կովկասյան թեփուղը *Squalius orientalis*, կարմրախայտը *Salmo trutta fario*: Հնարավոր է՝ նաև հանդիպի մանրաթեփուկը *Acanthalburnus microlepis*, հաշամը *Aspius aspius* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում), ծիածանախայտը *Parasalmo mykiss*:

Հեր-հեր գետում կարող են հանդիպել՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, կողակը *Capoeta* sp., Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի սպիտակաձուկը *Alburnus filippii*, կարող է ներթափանցել ծիածանախայտը *Parasalmo mykiss*:

Եղեգիս գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo fario*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Սևանի կողակը *Capoeta sevangi* (գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում):

Եղեգիս գետի Արտաբույնք վտակի ջրաբանական տվյալները /հոսք, ջրի առատություն, քարքարոտ աճեր, այլն/ համապատասխանում են կարմրախայտի *Salmo trutta fario* կենսաբանական պահանջներին:

Արտաբույնք գետում ձկներ չեն բնակվում: Ձկների բացակայության մասին վկայում են նաև տեղի բնակիչները: Ամենայն հավանականությամբ դա շաղկապված է ջրի մեջ առկա որոշ քիմիական նյութերի հետ, ինչը լրացուցիչ ջրաքիմիական ուսումնասիրությունների կարիք ունի:

Եղեգիս գետի Կարակայա վտակում կարող են հանդիպել՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի բեղաձուկը *Barbus*

cyri: Ձկնային տնտեսություններից այստեղ կարող է ներթափանցել ծիածանախայտը *Parasalmo mykiss*:

Կարակայայի գետի Այսաս վտակում կարող են հանդիպել՝ արևելյան արագաշարժը *Alburnoides eichwaldii*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, կարմրախայտը *Salmo trutta fario*:

Եղեգիս գետի Քարագլուխ վտակում հնարավոր է՝ հանդիպի միայն կարմրախայտը *Salmo trutta fario*:

Եղեգիս գետի և նրա վտակների ափերին գտնվում են զանազան ձկնային տնտեսություններ, որոնց ավազանները սնվում են գետի ջրով, և որը նորից հեռացվում է դեպի գետ առանց մաքրվելու: Այդ տնտեսություններում հիմնականում աճեցվում է ծիածանախայտ *Parasalmo mykiss*, որը կարող է այդտեղից պարբերաբար պատահականորեն հայտնվել գետում: Մտահոգություն է, որ նման տնտեսությունների լճակներում պահվող ձկները պարբերաբար հիվանդանում են տարբեր հիվանդություններով, որոնք կարող են վարակիչ լինել տեղաբնակ վայրի ձկների համար:

Արտավան գետում՝ կարող են հանդիպել՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*:

Ջառիթափ գետի Մարտիրոս վտակում կարող է հանդիպել կարմրախայտը *Salmo trutta fario*: Հնարավոր է նաև արևելյան տառեխիկի *Alburnoides eichwaldii* և Կուրի բեղաձկան *Barbus cyri* առկայությունը:

Մոնիտորինգի արդյունքների հիման վրա հրապարակվեց «Փոքր հիդրոէլեկտրակայանների ձկնուղիները եվ դրանց նշանակությունը Կուրի ավազանի Հայաստանի գետերի ձկնաշխարհի պահպանության համար» գիտական հոդվածը, հեղինակներն են՝ Ս.Խ. Պիպոյանը, Ա.Ս. Առաքելյանը, Լ. Գալստյանը, Ի. Ս. Գաբայանը:ⁱⁱ

Հոդվածում գետային ձկնաշխարհի վրա ՓՀԷԿ-երի ազդեցության վերաբերյալ մասնավորապես նշված է. «Արդեն իսկ ՀՀ ՓՀԷԿ-երի գործունեության արդյունքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ և խոչընդոտներ, որոնք մեծացնում են ՓՀԷԿ-երի ռիսկայնությունը բնապահպանական տեսանկյունից: Մեծամասամբ կառուցված լինելով փոքր գետերի հունների վրա՝ ՓՀԷԿ-երի ջրառի գլխամասային կառույցները, որտեղից գետի ջուրը մտնում է ճնշումային խողովակաշար և հոսում դեպի ՓՀԷԿ-երի տուրբիններ, գետի հունը սովորաբար պատնեշված է բետոնե կամ մետաղական պատվարով: Արդյունքում, փոքր գետակների ջուրը լճանում է, իսկ ջրի բնապահպանական թողքի սահմանված ծավալը և ձկնուղիների կառուցվածքը հաճախ չեն ապահովում գետում բնակվող ձկնատեսակների ու մյուս օրգանիզմների ազատ տեղաշարժը գետի մի հատվածից մյուսը: Բացի այդ, ՓՀԷԿ-երի ջրառի գլխամասային կառույցներում ձկնապաշտպան ցանցերի բացակայությունը կամ առկա աղբորսիչ ցանցերի մեծ ճեղքերը չեն արգելում գետի վերին հոսանքում բնակվող ձկների, հատկապես մանրաձկների հայտնվելը ՓՀԷԿ-երի ճնշումային խողովակաշարում և, այնուհետև, տուրբիններում, որտեղ նրանք ենթարկվում են մեխանիկական և այլ ազդեցությունների:

Այսպիսով, Կուր գետին պատկանող և Հայաստանի տարածքով հոսող գետերի հունի վրա կառուցված ՓՀԷԿ-երի ձկնուղիների տեսակների և կառուցվածքային լուծումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ձկնուղիների էական մասը չի համապատասխանում այդ գետերում բնակվող և պարբերաբար միգրացիաներ կատարող ձկնատեսակների կենսական պահանջմունքներին ու ֆիզիկական հնարավորություններին: Այդ իմաստով դրանք մեծամասամբ ինքնանպատակ են ու չեն համապատասխանում նմանատիպ կառույցների նկատմամբ ժամանակակից պահանջներին, ինչն էլ հանդիսանում է դրանց ոչ լիարժեք գործելու հիմնական պատճառը: Մյուս կողմից, ՀՀ-ում ձկնուղիները նախագծվում են գործող նորմերի համաձայն, ինչն իրականում մշակված է հարթավայրային մեծ գետերի համար [2, 5]: Արդյունքում, Հայաստանի գետերում բնակվող ձկնատեսակների զգալի մասը չի կարողանում հաղթահարել ՓՀԷԿ-երի կառուցման արդյունքում ստեղծված արգելքները՝ բետոնե պատվարները, իսկ ձկնուղի կառուցվածքները չեն ապահովում իրենց վրա դրված հիմնական նպատակը՝ կամուրջ հանդիսանալ գետի տարբեր հատվածներում բնակվող ձկնատեսակների ազատ տեղաշարժի և ձկնային պաշարների պահպանման ու բնականոն վերարտադրման համար»:

ՓՀԷԿ-երի արտադրողականության անբավարար մակարդակ

Մոնիտորինգի արդյունքները ցույց տվեցին, որ ՓՀԷԿ-երի էլեկտրաէներգիայի իրական արտադրությունը չի համապատասխանում նախագծով նախատեսված հաշվարկային արտադրությանը: Հիմնականում ցածր արտադրողականության պատճառներն են՝ գետերի սակավաջրությունը, ջրատնտեսական սխալ հաշվարկները, ցածր ՕԳԳ-ն և ցածրորակ սարքավորումները: Արդյունքում ՓՀԷԿ-ը պահանջված էլեկտրաէներգիայի արտադրության համար վերցնում է ավելի շատ ջուր, քան սահմանված է ՋԹ-ով, կամ սակավաջուր ամիսներին ընդհանրապես կանգնում է:

ՓՀԷԿ-երի ազդեցությունը բնության հատուկ պահպանվող տարածքների և անտառային տարածքների վրա

Մոնիտորինգի արդյունքում պարզվեց, որ ՓՀԷԿ-եր են կառուցված «Խոսրովի անտառ», «Շիկահող» պետական արգելոցների բուֆերային գոտիներում, «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» ազգային պարկերի տարածքներում, «Ջերմուկի» «Ջերմուկի ջրաբանական», «Եղեգնաձորի», «Գետիկի», «Արջատխլենու» և «Իջևանի» արգելավայրում, Դսեղի և Գուգարքի անտառտնտեսությունների տարածքներում:

Գնահատված չէ այս տարածքների էկոհամակարգերի վրա ՓՀԷԿ-երի ազդեցությունը: 2012թ-ից ՀՀ Ազգային ժողովի օրակարգում է «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին օրինագիծը (Պ-010-21.06.2012-ԳԲ-010/0), որն արգելում է Սևանա լիճ թափվող գետերի վրա ՓՀԷԿ-երի կառուցումը, մինչ օրս քվեարկության չի դրվել:

ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓՀԷԿ-երի կողմից գետային էկոհամակարգերի պահպանման ու կայուն ջրօգտագործման նպատակով **ՀՀ բնապահպանության նախարարությանն** առաջարկվում է իրականացնել հետևյալ բարեփոխումները.

1. Հանձնարել ՓՀԷԿ-եր շահագործող կազմակերպություններին՝

- Ապահովել ՓՀԷԿ-երի գլխամասային հանգույցները բնապահպանական թողքի ավտոմատ կառավարման և առցանց վերահսկման ջրաչափական համակարգերով:
- Տվյալ գետին բնորոշ ձկնատեսակների միգրացիաների ապահովման համար արդեն իսկ գործող կամ նախատեսվող ձկնանցարանների կառուցման նախագծերը կազմելիս՝ օգտվել համապատասխան հավաստագիր ունեցող ձկնաբանի խորհրդատվությունից: Ճնշումային խողովակների մուտքը ապահովել ձկնապաշտպան կառույցով:
- ՓՀԷԿ-ի շահագործման ժամանակ ծագող բնապահպանական ռիսկերի նվազման անհրաժեշտությունից ելնելով՝ ներկայացնել Ջրօգտագործման թույլտվության վերանայման հայտ՝ բնապահպանական թողքի հաշվարկման հիմք հանդիսացող հավաստի հիդրոլոգիական տվյալներով:

- Կայուն օրգանական աղտոտիչներով շրջակա միջավայրի աղտոտման ռիսկի նվազեցման նպատակով տրանսֆորմատորները կահավորել յուղահավաք համակարգով:

2. Հանդես գալ հետևյալ օրենսդրական նախաձեռնություններով՝

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում, այնտեղ ներառելով հետևյալ առաջարկները՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետից հանել «բ» ենթակետը. «6. Գ կատեգորիան ներառում է՝ 1) էներգետիկայի բնագավառում գործունեության հետևյալ տեսակները կամ արտադրական միավորները կամ դրանց բոլոր կառույցները կամ ենթակառուցվածքները՝ բ. հիդրոէլեկտրակայաններ՝ 1-10 ՄՎտ հզորությամբ» և այն տեղափոխել 14-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի «Բ» կատեգորիայում՝ նշելով «մինչև 10 ՄՎտ հզորությամբ» «1-10 ՄՎտ» փոխարեն:

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում, այնտեղ ներառելով հետևյալ առաջարկները՝

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքում 16-րդ հոդվածի «ա» կետը լրացնել հետևյալ բառերով.

«այդ թվում ՀԷԿ-երի կառուցում», 17-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը լրացնել հետևյալ բառերով. «այդ թվում ՀԷԿ-երի կառուցում»: Այսպիսով արգելել ՀԷԿ-երի կառուցումը արգելոցների, ազգային պարկերի տարածքում, ինչպես նաև սահմանել համապատասխան արգելք նաև ջրաբանական արգելավայրերում և բնության հուշարձան հանդիսացող ջրվեժների ջրհավաք ավազանում՝ համապատասխանաբար իրենց կանոնադրություններում, համաձայն Օրենքի 18-րդ և 19-րդ հոդվածների:

- «ՀՀ ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում՝ այնտեղ ներառելով հետևյալ առաջարկները՝

ՀՀ ջրային օրենսգրքի 4-րդ գլուխը լրացնել նոր 21.1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «1. Հիդրոէլեկտրակայանների շահագործման համար տրվում է էկոլոգիական անձնագիր: 2. Էկոլոգիական անձնագրի ձևը և տրամադրման կարգը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից» :

Սահմանել ջրօգտագործման սահմանափակումներ ըստ տարբեր ջրօգտագործողների՝ սակավաջուր տարիներին:

- «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում՝ այնտեղ ներառելով հետևյալ առաջարկները՝

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը. «2. Անմիջական ազդեցության գոտում արգելվում են՝» լրացնել «ե» կետով հետևյալ բովանդակությամբ. «ՓՀԷԿ-երի կառուցումը և շահագործումը Սևանա լիճ թափվող գետերի վրա: Արգելվում է ՓՀԷԿ-երի ընթացիկ շահագործումն ու հետագա կառուցումը»:

3. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատել ՓՀԷԿ-երի էկոլոգիական անձնագրերի ձևը և տրամադրման կարգը: Հիմնական ցուցանիշ սահմանել բնապահպանական թողքը՝ հաշվի առնելով գետավազանների կառավարման պլանները (առկայության դեպքում)՝ համապատասխանեցնել ՀՀ ջրային օրենսգրքին և Ջրի ազգային ծրագրի մասին ՀՀ օրենքին:

4. Վերանայել ՀՀ կառավարության 30.06.2011թ. 927-Ն որոշմամբ հաստատված բնապահպանական թողքերի գնահատման կարգը՝ ապահովելու գետային էկոհամակարգի հավասարակշռությունը: Առաջնահերթ վերանայել գետերում թողնվող բնապահպանական թողքի հաշվարկման մեթոդիկան և ներդնել հստակ էկոլոգիական մոտեցումներով հոսքի որոշման մեթոդներ՝ յուրաքանչյուր գետավազանի համար առանձին՝ ամսական, այլ ոչ թե տարեկան կտրվածքով, ինչը հնարավորություն կտա հատուկ պայմանների առկայության դեպքում (օրինակ՝ ձկների ձվադրման ժամանակահատված, կենսաբազմազանության պահպանության հետ կապված այլ հարցեր, և այլն) կատարել ավելացում հաստատված բնապահպանական թողքում:

5. ՀՀ կառավարության որոշմամբ արգելել նոր ՓՀԷԿ-երի կառուցումը դերիվացիայով 30% և ավելի ծանրաբեռնվածություն ունեցող գետերի վրա:

6. Համապատասխան գիտական կառույցների հետ համատեղ անցկացնել ուսումնասիրություններ ԲՀՊՏ-ներում և նրանց հարևանությամբ գործող ՓՀԷԿ-երի գործարկման նպատակահարմարության վերաբերյալ:

7. Վերականգնել գետային էկոհամակարգին ու ձկնաշխարհին պատճառած վնասը ՓՀԷԿ-ի միջոցներով՝ մասնավորապես վերականգնելով ջրային էկոհամակարգը և գետ բաց թողնելով համապատասխան քանակի ձկներ:

8. Մինչ այս բարեփոխումների իրականացումը դադարեցնել այս ոլորտի համար նոր ՋԹ-ների և լիցենզիաների տրամադրումը:

Առաջարկել ՀՀ **Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը՝**

- փակման ենթակա ՓՀԷԿ-երի համար պետության կողմից դրամաշնորհներ տրամադրել՝ այլընտրանքային էներգետիկայի զարգացման գործընթացներին մասնակցելու համար
- մշակել տեխնիկական պահանջներ ՓՀԷԿ-երի էլեկտրաէներգիայի արտադրության արդյունավետությունը բարձրացնելու և ջրային ռեսուրսների տնտեսման համար՝ պարտավորեցնելով վերազինել ՓՀԷԿ-երը ժամանակակից արդյունավետ սարքավորումներով

- դադարեցնել այն ՓՀԷԿ-երի գործունեությունը, որոնք անարդյունավետ են և չեն ապահովում բնապահպանական նորմերը՝ մինչև դրանց բնապահպանական նորմերին համապատասխան վերակառուցումը
- վերանայել ՀՀ կառավարության 2009թ. հունվարի 22-ի նիստի հ.3 արձանագրային որոշմամբ հաստատված ՓՀԷԿ-երի զարգացման սխեման՝ հաշվի առնելով թարմացած հիդրոլոգիական տվյալները և գետերի վրա ՓՀԷԿ-երի ազդեցության վերլուծության արդյունքները:

Առաջարկել **ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը՝**

- ՀՀ կառավարության որոշմամբ սահմանել էկոհամակարգային ծառայությունների դիմաց վճարումներ /գանձել նաև ՓՀԷԿ-երից/ և այդ վճարումները ուղղել ազդակիր համայնքին՝ որպես փոխհատուցում:

Առաջարկել **ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝**

- լիցենզիայի ժամկետը լրացած ՓՀԷԿ-երի երկարացման հայտերը քննարկելիս՝ վերանայել էլեկտրաէներգիայի սակագները՝ դրանց նվազեցման միտումով
- վերանայել լիցենզավորման կարգը և պայմանները, մասնավորապես, չտրամադրել լիցենզիա առանց հաստատված նախագծի
- մինչ այս բարեփոխումների իրականացումը դադարեցնել այս ոլորտի համար նոր լիցենզիաների տրամադրումը:

Առաջարկել **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը՝**

- մշակել «Արտակարգ էկոլոգիական իրավիճակի և էկոլոգիական աղետի գոտիների հայտնաբերման համար տարածքների էկոլոգիական վիճակի գնահատման չափորոշիչներ»-ի մեթոդաբանություն՝ սահմանելու նորմատիվներ գետերում նոր ՓՀԷԿ-երի լիցենզավորման համար՝ հաշվի առնելով, որ մի շարք դեպքերում ՓՀԷԿ-երն իրենցից ներկայացնում են կասկադներ, որոնք իրենց գումարային հզորությամբ գերծանրաբեռնում են գետերը:

Առաջարկել **ՀՀ քաղաքաշինության նախարարությանը՝**

- մշակել գիտականորեն հիմնավորված հստակ չափորոշիչներ հիդրոհանգույցների, ձկնանցարանների, խողովակաշարերի և մնացած կառուցվածքների համար, որպեսզի դրանց ազդեցությունը բնական միջավայրին հասցվի նվազագույնի, և բոլոր ՓՀԷԿ-երի կառուցվածքները համապատասխանացնել այդ չափորոշիչներին

Առաջարկել **զարգացման բանկերին՝**

- ՓՀԷԿ-երի կառուցման համար վարկեր տրամադրել Եվրոպական ջրային դիրեկտիվի պահանջների պահպանման պայմանով և մշտադիտարկել այդ պահանջների իրականացման գործընթացը:

ⁱ <http://www.ecolur.org/hy/news/energy/156/>, <http://www.ecolur.org/en/news/energy/156/>, <http://www.ecolur.org/ru/news/energy/156/>

ⁱⁱ Հայաստանի կենսաբանական հանդես, հատոր LXVIII,1, 2016, էջ75